

**ՖՈՒՏՈՒՐԻԶՄԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ Ե. ՉԱՐԵՆՑԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. ֆուտուրիզմ, գրական ուղղություն, իտալական ֆուտուրիզմ, ռուսական ֆուտուրիզմ, հայկական ֆուտուրիզմ, ազատ բանաստեղծություն, գեղարվեստական մտածողություն, բանաստեղծական ռիթմ, հանգ:

Ключевые слова и выражения. футуризм, литературное направление, итальянский футуризм, русский футуризм, армянский футуризм, свободная поэзия, художественное мышление, поэтический ритм, рифма.

Key words and expressions. futurism, literary movement, Italian futurism, Russian futurism, Armenian futurism, free poetry, artistic thinking, poetic rhythm, rhyme.

Նախաբան

Ֆուտուրիզմը որպես գրական հոսանք դրսևորվեց 20-րդ դարի սկզբի գրականության և արվեստի մեջ: Նրա սկիզբը սովորաբար համարվում է 1909 թվականը, երբ իտալացի բանաստեղծ Ֆ. Մարինետտին հրապարակեց այդ հոսանքի վերաբերյալ հրովարտակը: Հետագայում այն տարածվեց շատ երկրներում: Ֆուտուրիզմը համարվում է ձևապաշտական արվեստի դրսևորումներից մեկը, որն արտահայտում էր բուրժուազիայի ռազմամոլ տրամադրությունները: Ըստ էության, այն հակահումանիստական արվեստ էր, որը գիտակցաբար հրաժարվում էր կենդանի մարդու զգացմունքներն ու հոգեբանությունը պատկերելու խնդրից: Ֆուտուրիստները մերժում էին մարդկության ստեղծած գեղարվեստական արժեքները և իրենց հիմնական խնդիրներից մեկը համարում էին «բառաստեղծությունը»՝ հնչյունների զանազան զուգակցումներով: Ֆուտուրիզմը տարասեռ երևույթ է, քան գրական մյուս ուղղությունները: Տարբեր երկրներում ֆուտուրիստները դրսևորում էին տարբեր հայացքներ: Օրինակ, Ռուսաստանում այդ ուղղության գլխավոր դեմքը համարվում էր Վ. Մայակովսկին, որի հայացքները զգալիորեն տարբերվում էին իտալականից: Ֆուտուրիզմն իր ազդեցությունն ունեցավ նաև հայ գրականության զարգացման վրա, հատկապես 1920-ական թվականներին՝ Ե. Չարենցի, Ա. Վշտունու և Գ. Աբովի որոշ գործերում՝ ձևավորելով «Երեքի» դեկլարացիան:

Ուսումնասիրության նպատակն է՝ ցույց տալ ֆուտուրիզմի դրսևորումները Ե. Չարենցի ստեղծագործություններում:

Բովանդակություն

Ֆուտուրիզմը, ինչպես նաև սիմվոլիզմը և մոդեռնիզմը, գրական այն ուղղություններից են, որոնք եվրոպական, ռուսական և հատկապես հայ գրականության մեջ լայն տարածում ստացան 20-րդ դարի առաջին տասնամյակներում: Հայ գրականության մեջ դրանց դրսևորումների հարցերը ամենատարբեր մոտեցումներով քննարկվել են դեռևս դարասկզբին և շարունակվել հետագա տասնամյակներում՝ ընդհուպ մեր օրերը: Խորհրդահայ գրականագիտության մեջ ֆուտուրիզմը արգելված ուղղություն էր: Թերևս բացառություն կարող են կազմել «Երեքի դեկլարացիայի» և Ե. Չարենցի առթիվ արված դիտարկումները, որոնցից շատերում ֆուտուրիզմը բնութագրվում էր «ամենառեակցիոն» կոդվերով, բայցևայնպես, Ե. Չարենցի համար այն դիտվում էր որպես ժամանակավոր հրապուրանք կամ մտայնություն, որոնք կարճ ժամանակամիջոցում հաղթահարվեցին նրա կողմից («Պոեմ հերոսական»):

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ, օրինակ, Իտալիայում և Ռուսաստանում ֆուտուրիզմը ցուցաբերում էր ինչպես նույն կամ նման, այնպես էլ՝ տարբեր յուրահատկություններ: Նմանությունները պայմանավորված էին գեղարվեստական մտածողության թարմացման, «քնարական հերոսի կրավորականությունն ու երազայնությունը» հաղթահարելու միտումներով, տարբերությունները՝ ազգային մտածողության ու հոգեբանության, աշխարհագրական միջավայրի, կեցության յուրահատկություններով:

Ռուսական ֆուտուրիզմը, ի տարբերություն իտալականի, որը քարոզում էր ռասիզմ և պատերազմները համարում «սանիտարական ախտահանող» միջոցառումներ՝ հետևելով Թ. Մարինետտիին, աչքի էր ընկնում «չափավորությամբ և խաղաղասիրությամբ» և պատերազմները ներկայացվում էր որպես մարդկության դեմ ուղղված մեծագույն չարիք ու հանցագործություն (Վլ. Մայակովսկի՝ «Պատերազմն ու աշխարհը», Վ. Խլեբնիկով՝ «Պատերազմը թակարդում»):

Ռուսական ֆուտուրիզմն ավելի քիչ էր քաղաքականացված: Իտալականի հարձակումների թիրախում ամբողջ ապականված աշխարհն էր, ռուսականի նետերն ուղղված էին հասարակության քաղքենիական շերտերին, «ռուսական ֆուտուրիստները (Վ. Խլեբնիկով, Ե. Գուրո, Դ. Բուրյուկ, Վլ. Մայակովսկի) չունեին իտալական ֆուտուրիզմի «միլիտարիստական-տեխնոկրատական» արվեստի այդ «դեհումանիզացիոն» ուղղվածությունը, ինչը յուրահատուկ էր իտալականին: Նրանց ելույթները ուղղված էին նախ և առաջ քաղքենու, նրա ինքնագոհ

եսամոլության, քարացած իդեալների և կեղծ կոռեքերի, կույր հավատի դեմ և «ապտակ էին հասարակական ճաշակին»¹: Այսպիսով, ռուսական ֆուտուրիզմը ձգտում էր համատիեզերական առաքելության և առաջ էր քաշում բարձր արվեստի ստեղծման նոր ծրագրեր՝ ներառելով դրանց մեջ գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումները:

Թե՛ իտալական և թե՛ ռուս ֆուտուրիստներին ուշադրությունը սևեռված էր անհատին: Անհատը՝ իր ինքնությամբ, յուրահատուկ աշխարհայեցողությամբ, սիրո, բարոյականության կատեգորիաների վերաբերյալ տարաբնույթ պատկերացումներով, - սա է ֆուտուրիստական բոլոր հրովարտականների փիլիսոփայական էլակետը: Ուրիշ հարց, թե ո՞վ էր նրանց պատկերացրած անհատը, և ի՞նչ էր շեշտադրվում նրա վարքագծում և հոգեկերտվածքում:

Իտալական ֆուտուրիստների պատկերացրած անհատը գերմարդն է, որ վեր է կանգնած հասարակ մահկանացուներից: Նրանց համար անգամ սերն է թուլակամների բնագոյների դրսևորվում, ուստի՝ անվերապահորեն ենթակա է մերժման: Ռուս ֆուտուրիստները չէին մերժում սերը, նրանք մերժում էին սիրային բանաստեղծության «մոդելը» և հնարավոր բոլոր եղանակներով փորձում էին կազմաքանդել այն. «Իտալական ֆուտուրիզմը ուժեղ անհատի տեսանկյունից էր մերժում սերը: Նույն ուժեղ անհատի տեսանկյունից ռուս ֆուտուրիստները խորհրդապաշտական եթերային սիրուն հակադրում էին մարմնական սերը», երբեմն «առողջ սիրո ցուցանակի տակ մատուցելով էժանագին ու գոեհիկ ապրումներն ու կրքերը»², ինչը, բնականաբար, խորթ էր բարոյական այլ նորմեր դավանող հայ բանաստեղծների համար: 20-րդ դարի սկզբի հայ իրականությունը նույնպես թելադրում էր գրականության և մշակույթի այլ բնագավառների առաջընթացի նոր չափորոշիչներ:

Եվ եթե համեմատենք Ֆ. Թումագո Մարինետտիի ու նրա գաղափարակիցներ Կորրադո Գովոնիի, Ալդո Պալացեսկիի և Արդենգո Մոֆֆիչիի «Ֆուտուրիզմի մանիֆեստը», Վ. Խլեբնիկովի, Դ. Բուրյուկի, Վլ. Մայակովսկու, Ա. Կրուչոնիխի «Ապտակ հասարակական ճաշակին», ինչպես նաև Ե. Զարենցի, Գ. Աբովի, Ա. Վշտունու «Երեքի դեկլարացիայի» հետ, ապա նրանց գրական հրովարտականերում կոեսնենք գաղափարական զգալի տարբերություններ:

Գաղափարական-գեղարվեստական տարբեր բովանդակություն ունեին նաև նրանց ֆուտուրիստական ստեղծագործությունները՝ Ֆ. Թ.

¹ Էդոյան Հ., Եղիշե Զարենցի պոետիկան, Ե, 2011, էջ 249:

² Զաքարյան Ա., Գրական արձագանքներ և հուշեր, Ե., 1985, էջ 33:

Մարինետտիի «Մաֆարկա ֆուտուրիստը», Ա. Պալացեսկու «Պերելայի օրենսգիրքը», Վլ. Մայակովսկու «Ամբողջ ձայնով», «Միստերիա-բուֆ», Կարա-Դարվիշի «Կյանքի ջութակը», «Օրերից առաջ», Գ. Աբովի «Միայն կինը», «Դանակը բկին», Ա. Վշտունու «Արևելքը հուր է հիմա», «Հուզանք ու զանգ», Ե. Չարենցի «Պոեզոգությունա», «Ռոմանս անսեր», «Ասպետական» ռապսոդիա, «Խմբապետ Շավարշը»:

Ֆ. Թ. Մարինետիի «Ֆուտուրիզմի մանիֆեստը» նոր դարի սահմանագծին բոլոր ֆուտուրիստների համար դարձավ կողմնորոշման չափանիշների ճշգրտման, գրական առաջընթացը նոր հուն մղելու ուղեցույց:

1. Մենք ցանկանում ենք գովերգել արկածախնդրությունը, եռանդի ու խիզախության սովորությունը:
2. Արիությունը, խիզախությունը, ընդվզումը կազմելու են մեր պոեզիայի հիմնական տարրերը:
3. Մինչ օրս գրականությունը գովերգել է մտախոհ անշարժությունը, գերզմայլանքն ու քունը: Մենք միտված ենք գովերգելու ագրեսիվ շարժումը, տենդային անքնությունը, սրընթացությունը, մահաթոհիչքը, ապտակն ու բռնկոցը:
4. Մենք պնդում ենք, որ աշխարհի շքեղությունը հարստացրել է մի նոր գեղեցկությամբ, այն է՝ արագության գեղեցկությունը: Մրցարշավի մեքենայի ծածկոցը՝ զարդարված մեծ խողովակներով, որոնք հիշեցնում են հրաշունչ օձերին... մի շառաչող մեքենա, որն ընթանում է ասես փամփուշտի արագությամբ, ավելի գեղեցիկ է, քան Սամոթրակեցի Նիկեի արձանը:
5. Փա՛ռք դեկի առաջ նստած մարդուն, ում նետած կատարյալ նիզակը հասնում է աշխարհի՝ դրա իսկ ուղեծրի շրջագծով:
6. Բանաստեղծը պետք է ստեղծագործի անձնատուր եռանդով, շքեղությամբ և շռայլությամբ, նախաստեղծ բնագոյների խանդավառությունը կրկնապատկելու միտումով:
7. Այսուհետ գեղեցկությունը երևան է գալու միայն պայքարի միջոցով: Գլուխգործոց է համարվելու միայն ագրեսիվ բնույթ ունեցող ստեղծագործությունը: Պոեզիան պետք է ընկալվի որպես կատաղի գրոհ անհայտ ուժերի դեմ՝ ստիպելով վերջիններիս խոնարհվել մարդու առջև:
8. Մենք կանգնած ենք դարի սահմանագծին: Ինչո՞ւ նայել ետ, եթե ցանկանում ենք տապալել Անհնարինի գաղտնի դռները: Ժամանակը և Տարածությունը մեռան երեկ: Այսուհետ ապրում ենք բացարձակի մեջ, չէ՞ որ արդեն ստեղծել ենք ամենագոհավերժական արագությունը:

9. Մենք փառավորում ենք պատերազմը՝ աշխարհի միակ հիգիենան, ռազմամոլությունը, հայրենասիրությունը, ազատախոհների ջախջախիչ գործունեությունը, գեղեցիկ մտքերը, հանուն որոնց կարելի է մեռնել:
10. Մենք ցանկանում ենք վերացնել թանգարանները, գրադարանները, ամեն տեսակ կրթական համալիրները, պայքարել բարոյախոսության, ֆեմինիզմի, օպորտունիստական ու օգտապաշտ ցանկացած ստորության դեմ:
11. Կեցցե՛ն աշխատանքից, հաճույքից կամ խոռվությունից ոգևորված մեծ ամբոխները: Գովերգե՛նք ժամանակակից մայրաքաղաքների բազմագույն կամ բազմաձայն հեղափոխական շարժումները, զինանոցների գիշերային թրթռուն ավյունը և կատաղի էլեկտրական լուսնից այրված նավաշինարարները, անհագ կայարանները խժողո՞ծխացող օձերը, ծխի գալարվող թելերով ամպերից կախված արհեստանոցները: Գովաբանե՛նք վայելչակազմ մարմնամարզիկների նման մետաղափայլ գետերը թռչող-անցնող կամուրջները, հորիզոնից անդին փախչող արկածախնդիր շոգենավերը, վիթխարի գնացքաքարշերը, որոնք, ինչպես խողովակներով սանձած պողպատե հսկայական նծույզներ, դոփում են երկաթուղային գծերի վրա և ինքնաթիռների սահուն թռիչքը, որի պտուտակը դրոշի պես շառաչում է քամուց և թվում է՝ ծափահարում է կարծես մի խանդավառ ամբոխ»³:

Պետք է նշել, որ այս «հրաբորբոք» մանիֆեստով Ֆ. Թ. Մարինետտին ցանկանում էր Իտալիան, որն արդեն «հնոտիքի երկիր է», ազատագրել անցյալի ախտանիշներից, որոնք համավարակի են վերածվել թանգարաններում ու գրադարաններում: Մենք ցանկանում ենք «ազատագրել մեր երկիրը պրոֆետրներով, հնագետներով, ցիցերոններով և հնավաճառներով թարախակալված խոցից: Ազատենք այն անթիվ անհամար թանգարաններից, որոնք գերեզմանների պես պատում են նրան: Թանգարաններ՝ գերեզմաններ: Նրանց իսկապես որ կարելի է նմանեցնել միմյանց: Թանգարաններ՝ հանրային ննջարաններ, ուր մարդիկ իրենց հավերժ հանգիստն են գտնում ատելի ու անծանոթ մարդկանց կողքին: Թանգարաններ՝ անհեթեթ սպանդանոցներ քանդակագործների ու նկարիչների, որոնց պատերի ներքո գազանաբար ոչնչացնում են միմյանց գույների և գծերի հարվածներով: Ես դեռ կարող եմ հանդուրժել, որ տարին

³ Մարինետտի Թ., Ֆուտուրիզմի մանիֆեստ, թարգմ.՝ Զ. Ոսկանյանի, տե՛ս Արտասահմանյան գրականություն, Ե., 2 015, էջ 55:

մեկ անգամ կարելի է ուխտագնացություն կատարել դեպի թանգարաններ, ինչպես մեռելոցին գնում են գերեզմաններ, կամ էլ ծաղիկների տեսքով Ջոկոնդային հարգանքի տուրք մատուցում, բայց չեմ ընդունում, որ ամեն օր թանգարաններ այցելության տանենք մեր տխրությունը, մեր փխրուն արիությունը, մեր հիվանդագին անհանգստությունը: Ինչո՞ւ են մարդիկ իրենք իրենց թունավորում, ինչո՞ւ են ցանկանում նեխել: Ասացե՛ք ինձ, ի՞նչ կարելի է տեսնել մի հին կտավի վրա, եթե ոչ արվեստագետի տքնաջան ծամաճողությունը... Արդյո՞ք ցանկանում եք վատնել ձեր լավագույն ներուժը անցյալի հավերժական և անօգուտ զմայլանքի վրա: Այդ անցյալից դուրս եք գալու ուժասպառ, նվաստացած ու լարված»⁴: Եզրափակելով՝ Թ. Մարինետտին հայտարարում էր. ««Իտալիա» բառը ավելի բարձր պետք է հնչի ազատություն բառից»⁵:

Ռուս ֆուտուրիստները, իտալացիների օրինակով, նույնպես ժխտում էին անցյալի մշակույթը. «Բուրժուական արվեստը ճահճային մշուշ էր, որի միջով քմահաճորեն թափանցում էին իրականության ուրվագծերը: Տարբեր էին ճահիճները, տարբեր էին և մշուշները: Ճահիճները վերացնելու համար, այդ մշուշները քամու նոր շնչով ցրելու նպատակով պետք է «արդիականության նավից դուրս նետել Պուշկինին, Դոստոևսկուն, Տոլստոյին և մյուսներին», նաև՝ Բլոկին, Սոլոգուբին, Բալմոնտին, Բրյուսովին, «Այրել Էրմիտաժն ու Տրետյակովյան պատկերասրահը»»⁶:

Ռուսական ֆուտուրիզմի ազդեցությամբ ներկա հայ բանաստեղծությունը «թոքախտավոր» էր համարում «Երեքի դեկլարացիան». «Ներկա հայ բանաստեղծությունը մի թոքախտավոր է, որ անխուսափելիորեն դատապարտված է մահվան: Նրա գոյության միակ արդարացումը – մահամերձ լինելն է... Մենք հանդես ենք գալիս որպես ախտահանողներ: Կորչեն գրական արիստոկրատ շկոլաները, առանձնասենյակային գրողները, գրադարաններում ննջող գրքերը և սալոնային կանայք: Կեցցե գեղարվեստական կենդանի խոսքը, ստեղծագործող բազմություններում: Կեցցե ստեղծագործող բազմությունը իր հզոր ռիթմով...»⁷:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Ֆ. Թ. Մարինետտին, ռուս ֆուտուրիստները և «Երեքի դեկլարացիայի» հեղինակները «մտախոհ

⁴ Նույն տեղում, էջ 56:

⁵ Маринетти Ф. Т., Битва у Триполи, Salamandra P.V.V., 2 010, с. 9.

⁶ Ст'ю Полонский Вяч., Очерки литературного движения революционной эпохи, М.-Л., 192 9, с. 2 49.

⁷ Չարենց Ե., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Ե., ԳԱ հրատ., 1967, էջ 553-554:

անշարժությանը, գերեզմանային քնկոտությանը» հակադրում էին «արագության գեղեցկությունը»: Այսպես, «Երեքի դեկլարացիան» գրողներից պահանջում էր «դուրս հանել բանաստեղծությունը սենյակներից դեպի փողոցներն ու մասսաները և գրքերից դեպի կենդանի խոսքը»⁸: Ֆ. Թ. Մարինետին նույնպես պահանջում էր ստեղծագործել «անձնատուր շքեղությամբ ու շռայլությամբ, եռանդով, նախաստեղծ բնագոյների խանդավառությունը կրկնապատկելու եռանդով»⁹, իսկ դրա համար, ըստ Ե. Չարենցի, անհրաժեշտ էր, որ պոեզիան ընկալվի որպես կատաղի գրոհ անհայտ ուժերի դեմ՝ «արտահայտի այն, ինչ որ այժմեական է - շարժում, դասակարգային պայքար, երկաթ ու կարմիր»¹⁰:

Քաղաքի թեման հակադրվում էր «աննինջ հովվերգությանը»: Արդյունաբերական քաղաքում ֆուտուրիստներին հետաքրքրում էր «արագացված հաղորդակցման տարածությունը», որն անմիջական կապ էր ստեղծում արվեստի և կյանքի միջև: Նրանց համար պաշտամունքի առարկա էին դառնում «արդյունաբերական քաղաքի խելահեղ ռիթմերը, խելագարված ամբոխի ըմբոստ կապերը: Մեքենան դառնում է պաշտամունքի առարկա: Միստիկական ձևեր էին ստանում հարաշարժության, արագության գաղափարները»¹¹: «Ֆուտուրիստները՝ որպես ճշտապահ քարտուղարներ ժամանակակից բուրժուազիայի-գրի էին առնում գործարանների ճախարակների պտույտի արագությունը, «ամբոխների» ժխորը, պատերազմի կենսաբար նշանակությունը, պուլեմետի տրա-տա-տա-տան, բոմբայի բում-բումը, բուրժուազիային անցած հնադարյան ֆեոդալական ապարանքների գեղեցկությունը... և այլն»¹²:

Ֆուտուրիզմի ձևավորման գործում անչափ մեծ էր ամերիկացի բանաստեղծ Ուոլթ Ուիթմենի դերը: Նա առաջիններից մեկն էր, ով գրականություն բերեց արդյունաբերական քաղաքի, զանգվածների ըմբոստացման, արագության ու շարժման, մարդուն տիեզերական բարձունքներից տեսնելու և նրան տարածական բոլոր չափումների մեջ ներկայացնելու թեմաները: Ու. Ուիթմենը կազմաքանդեց բանաստեղծության կառուցվածքի ավանդական ձևերը, ստեղծեց բանաստեղծության

⁸ Չարենց Ե., հ. 6, Ե., 1967, էջ 554:

⁹ Մարինետի Թ., Ֆուտուրիզմի մանիֆեստ, տե՛ս Արտասահմանյան գրականություն, Ե., 2015, էջ 55:

¹⁰ Չարենց Ե., հ. 6, Ե., 1967, էջ 554:

¹¹ Шиллер Ф., История западно-европейской литературы нового времени в 3-х томах, т. 3, М., 1937, с. 204.

¹² Կարմիր աստղ, Ե., 1923, թիվ 4, էջ 2 :

իր յուրահատուկ «մոդելը»: Նրա պոեզիան ընդգրկում է տարածաժամանակային վիթխարի սահմաններ և հայացքն ուղղում է դեպի «գալիքը».

...Շարժվում է հսկա Գալիքը, գալիս ու գալիս է
դեպի ինձ:
Տեսնում եմ՝ ետ-ետ է գնում հորիզոնը
Տեսնում եմ Ազատությունը, փառքով զրահավորված,
որպես տրիումֆատոր,
Եվ իր հետ, կողք կողքի, հաղթական երթի են ելել
Խաղաղությունն ու Աշխատանքը¹³:
(Թարգմ. Ե. Չարենցի)

Ու. Ուիթմենը ազատ բանաստեղծության (վերլիբր) նախա-կարապետն է համաշխարհային պոեզիայում, ինչպես նաև առաջիններից մեկը, որ պոեզիա բերեց շարային կառուցվածքի յուրահատկությունները: Նրա ստեղծագործության առանցքում «ճորտությունից ազատագրված» մարդն է, ում հանդիպում ենք եվրոպական, ռուս և հայ բանաստեղծների ստեղծագործություններում, որոնք այս կամ այն չափով առնչվում են ֆուտուրիզմին*: «Քսաներորդ դարի ռուսական բանաստեղծության հայտնագործությունները նույնպես հեղափոխական բնույթ էին կրում. և՛ Մայակովսկու ուխտմենական թափը, և՛ ցվետական ինտոնացիայի լարված բեկունությունը, որոնք երերեցին ավանդական վանկա-շեշտային բանաստեղծությունը և նախապատրաստեցին վերլիբրի այսօրվա հայտնությունը»¹⁴:

Ե. Չարենցի և Վ. Մայակովսկու ֆուտուրիստական հայացքներին անդրադարձել է նաև Ա. Ալեքսանյանը. ««Երեքի» դեկլարացիան» և Չարենցի շարժումն ուներ մի նպատակ՝ հնարավորինս արագ հաղթահարել բաց թողած տարածությունը և հայ գրականության զարգացումը դուրս բերել մեծ շարժման ուղեծիր: Ե՛վ Մայակովսկին, և՛ Չարենցը փառաբանում էին շարժումը, արագությունը, տեխնիկական առաջընթացը»¹⁵: Անշուշտ, Ե.

¹³ Ուիթմեն Ու., Խոտի տերևներ: Բանաստեղծություններ, Ե., 2 012, էջ 2 5:

* Այդ առիթով մեջբերենք ֆուտուրիստ Դավիդ Բուրյուլկի հետևյալ խոսքը, ով հայտարարում էր, թե «Ֆուտուրիզմը դպրոց չի, այն նոր աշխարհագրացողություն է: Ֆուտուրիստները՝ նոր մարդիկ են», տե՛ս Бурлюк Д., Фрагменты из воспоминаний футуриста, СПб., 1994, с. 63.

¹⁴ Նարեկացի Գ., Խոովահույզ՝ Բախի խորալների պես: Հոդվածներ, Կազմ.՝ Լ. Մկրտչյան, Ե., 1999, էջ 40:

¹⁵ Ալեքսանյան Ա., Եղիշե Չարենցը և եվրոպական գրական ավանդույթը, Ե., 2 02 1, էջ 161:

Չարենցի պատկերավորման արտահայտչամիջոցներն ու անսովոր համեմատությունները հարստացնում էին գրական ավանդական ձևերը նոր ժամանակների շունչն արտահայտող բառիմաստներով և ռիթմերով, «բանաստեղծական տողը հարստացնելով նաև այսպես կոչված «գույների խտացումով»».

Լցված է անհուն իմ հոգին հիմա
Շփոթ երգերով ու աղմուկներով.
Լցված է սիրտը իմ՝ էլեկտրական
Բորբ հոսանքներով:
Ռադիո-կայան է իմ հոգին հիմա
Ամբողջ աշխարհի ու մարդկանց հանդեպ,
Ու բա ըձր է, բա ըձր է կայանն իմ հոգու՝
Մասիսի նման բարձր է ու հաստատ-
Հզո ը, ահարկո՛ւ¹⁶:

Կարելի է եզրակացնել, որ Ե. Չարենցը, թեպետ, հետևում էր իտալացի և ռուս ֆուտուրիստների գրական ծրագրերին ու հրովարտականներին, սակայն, հետապնդում էր բոլորովին այլ նպատակներ: Հետևապես, նրանց «բառային երկարաշունչ շարադրանքին» հակադրելով մեծ քաղաքի ռիթմերը, առանձին գույներին՝ «գունային փնջերը և ստույգ գտած աղմուկները», Ե. Չարենցը բնութագրում է նոր երգի էությունը, փորձում թարմացնել գեղարվեստական մտածողությունը, բանաստեղծության ռիթմերը, բառապաշարը, հանգավորումը, դուրս գալ անհատական ապրումների ոլորտից և խոսել «բոլորի մասին, բոլորի անունից».

Օրերում այս վառ, հողմավար, շփոթ-
Հեռու ու մոտիկ միլիոն սրտերի
Ե՛րզն է վիճակվել ինձ երգել այսօր.
Իմ բազմամիլիոն, բյուր ընկերների
Խինդը այսօրվա ու թռիչքը մեծ-
Գալիք օրերին նետե՛լն է երգիս
Վիճակվել այսօր:
Ահա՛ թե ինչու՛ է երգս հաղթական,
Ահա՛ թե ինչու է իմ ձայնն այսօր
Հավերժի նման համա՛ռ ու հաստա՛տ¹⁷:

¹⁶ Չարենց Ե., Երկեր, Ե., 1983, էջ 160:

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

Եզրակացություն

Ֆուտուրիզմը (ապագայապաշտություն), որպես գրական ուղղություն, Իտալիայում, Ռուսաստանում և հայ իրականության մեջ լայն տարածում ստացավ 20-րդ դարի առաջին տասնամյակներում: Եթե իտալական ֆուտուրիզմը քարոզում էր ռասիզմ և պատերազմները համարում «սանիտարական ախտահանող» միջոցառումներ, ապա ռուսական ֆուտուրիզմը աչքի էր ընկնում «չափավորությամբ ու խաղաղասիրությամբ» և պատերազմ ներկայացնում էր որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Իտալական ֆուտուրիզմի ամենանշանավոր ներկայացուցիչը Ֆ. Թոմազո Մարինետին էր, ով հայտնի է «Ֆուտուրիզմի մանիֆեստով», իսկ ռուսական իրականության մեջ՝ Վ. Մայակովսկին («Պատերազմն ու աշխարհը»), Վ. Խլեբնիկովը («Պատերազմը թակարդում») և ուրիշներ:

Ֆուտուրիզմը զգալի ազդեցություն ունեցավ նաև հայ գրողների՝ Ե. Չարենցի, Գ. Աբովի և Ա. Վշտունու վրա՝ ովքեր ստեղծեցին «Երեքի դեկլարացիա» գրական հրովարտակը: «Դեկլարացիայի» հեղինակները գտնում էին, որ «հայ գրականությունը թոքախտավոր է», իսկ «մենք հանդես ենք գալիս որպես ախտահանողներ»: «Դեկլարացիան» գրողներից պահանջում էր գրականությունը «դուրս հանել սենյակներից դեպի փողոցներն ու մասսաները»: Ըստ այդմ, անհրաժեշտ էր, որ պոեզիան «արտահայտի այն, ինչ որ այժմեական է...»: Հետևելով եվրոպացի և ռուս ֆուտուրիստներին, Ե. Չարենցը փորձում էր թարմացնել գեղարվեստական մտածողությունը, խոսքը, բանաստեղծության ռիթմերը և նրան հաջողվեց ստեղծել նորագույն ժամանակներին համահունչ պոեզիա:

Нарек Сукиасян

Проявление футуризма в творчестве Е. Чаренца

Резюме

Футуризм (будущее склонение) как литературное направление получил распространение в Италии, России и в армянской действительности в первые десятилетия 20 века. Если итальянский футуризм проповедовал расизм, называя войны «санитарно-дезинфицирующими средствами», то русский футуризм был «умеренным и миролюбивым», представляя войну преступлением против человечества. Наиболее ярким представителем итальянского футуризма был Ф. Томазо Маринетти, известный своим «Манифестом футуризма», а в российской действительности В. Маяковский («Война и мир»), В. Хлебников («Война в мышеловке») и другие.

Футуризм оказал значительное влияние на армянских писателей: Е. Чаренца, Г. Абова, А. Вштуна, создавших литературное воззвание «Декларация трех». Авторы «Декларации» посчитали, что «армянская литература больна туберкулезом» и «мы выступаем в роли дезинфицирующих средств». «Декларация» требовала от писателей «вынести литературу из комнат на улицу и в массы». Соответственно, поэзия должна была «выражать актуальное». Вслед за европейско-русскими футуристами Е. Чаренц пытался освежить художественное мышление, речь, ритмы поэзии и ему удалось создать поэзию, созвучную современности.

Narek Sukiasyan

The manifestation of futurism in the work of E. Charents

Summary

Futurism (future declination) as a literary movement became widespread in Italy, Russia and Armenian reality in the first decades of the 20th century. If Italian futurism preached racism, calling wars "sanitary disinfectants", then Russian futurism was "moderate and peaceful", presenting war as a crime against humanity. The most prominent representative of Italian futurism was F. Tomaso Marinetti, known for his "Manifesto of Futurism", and in Russian reality V. Mayakovsky ("War and Peace"), V. Khlebnikov ("War in a Mousetrap") and others.

Futurism had a significant influence on the Armenian writers E. Charents, G. Abov, A. Vshtuni, who created the literary appeal "Declaration of Three". The authors of the "Declaration" considered that "Armenian literature is sick with tuberculosis" and "we act as disinfectants". The "Declaration" required writers to "bring literature out of their rooms onto the street and into the masses." Accordingly, poetry had to "express the actual". Following the European-Russian futurists, E. Charents tried to refresh artistic thinking, speech, rhythms of poetry, and he managed to create poetry in tune with modernity.

Խմբագրություն է ուղարկվել 19. 06. 2022թ.

Հանձնարարվել է գրախոսության 05. 07. 2022թ.

Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022թ.